ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2· Օտըմ ըս կէ՛ը	Օտըմ ըք կըերէ՛ք
3· Օտըմ չըս օտել մէ՛	Օտըմ չըք օտել մէ՛ք
2· Կտրըմ ըս կտրի	Կտրըմ ըք կտրըցէ՛ք
3· Կտրըմ չըս կտրել մէ՛	Կտրըմ չըք կտրել մէ՛ք

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Թա վըէր (թէոր) օտիմ, օտիս, օտի· օտինք, օտիք, օտին· կտրիմ, կտրիս կտրի, կտրինք, կտրիք, կտրին։

Քինալ (գնալ)·

ՆԵՐԿԱՅ

Եզական	Յոգնական
1· Քինըմ ըմ	Քինըմ ընք
2· Քինըմ ըս	Քինըմ ըք
3· Քինըմ ա	Քինըմ ըն

ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

2· Քինացի	քեցի	Քինացինք	քեցինք
2· Քինացիր	քեցիր	Քինացիք	քեցիք
3· Քինաց	քեցաւ	Քինացին	քեցին

ԱՊԱՌՆԻ

1· Կըքինամ	Կըքինանք
2· Կըքինաս	Կըքինաք···
3· Կըքինա	Կըքինան···

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Քինըմ ըս — քինա՛, Քինըմ ըք — քինացէ՛ք, քեցէք· Քինըմ չըս, քինալ մէ՛, Քինըմ չըք, քինալմէ՛ք։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Թա վըէր քինամ, թա վըէր քինաս···, քինա — քինանք, քինաք, քինան։

* * *

ԱՌԱԿՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՎ

1· Ճպատրա քոլատ կտրի։
2· Մօրը տես, աղջիկն օղի։
3· Վախի էն գետան, վէր վէչ կվչչա, վէչ կըթչչա։
4· Խրըվածի վէգին քինաց, տեսաւ էշ ըն դաղրմ։
5· Գետին չհսած, փոխկերդ եր մի քաշիլ։
6· Ժաման ես ըմ կյամ, դորմի Աստուծը տուրս ասըմ։
7· Սեւ եղնը վեր ընկաւ, դանակավերը շտացաւ։
8· Էշը դատի ձին օտի։
9· Ֆիդան ձիավերին հնդեր չի։
10· Շանը հետ հնդերաց, մհակը ձեռքատ վեր մէ քցել։
11· Օրիշին վեր փորողը, ինքը մէջը կընկնի։
12· Խեղվողը օձին էլ ձեռք կը մեկնի։
13· Ասինք մեչիզի տոռնը պեցա, շոնն էլ հայա պեղմա ունենա։
14· Տանը վերցակ, դրսըմը ճոտ։ (Ավդա խորուզ, բայիրդա ճոտ։)
15· Զաթուն հինչքան էրգան ինի, իւրան կեփաւը անց կը կէնա։
16· Կաշին ճնաչող մուշտարին, դուրեհան չի։
17· Հացը հացթոխին տո, մինն էլ իւիլ։
18· Աբք ունեցողը նաղ կանի։
19· Սեւին սապունը, խեվին խրատը հի՞նչ կանի։
20· Սիպտակ շոնը, պեմբակ ծախողին աչքին վատ ա իրեւում։
21· Շոնը կհայչի, քեարվանը կրնցնի։
22· Գյողը գյողան գիւղացաւ, Աստուծ տեսաւ ըրմացաւ։
23· Ես տարվա ծեռը ընցած տրվա ծտին ճիվճիվ ա անըմ։
24· Ձիի քացուն ձին կը դրմանա։
25· Գիտըմ չի հու ա մեռալ, Վարդան վա՛յ ա ահըմ։
26· Ամըն օր պապը քեաթա չոտել։
27· Մին ձեռքաւ էրկու ճմերուկ չի փոնը-վել։
28· Օրիշի ձիին նստողը չուտ վէր կը կեա։
29· Էշին եր ինելը մին համութ, վեր կեալը էրկու։
30· Սուտ խօսողին տոնը կրակ ընկաւ, հերատացին վէչ։
31· Դոնաւ մտած քամին, հիւրթավը տյուս կը կեա։
32· Տանը գերին օրհնեա ապր չկա։
33· Հեռի տեղի հալվան չերեփաւ կոտին։
34· Աչքդ պեց, բարին տես։
35· Ջրի կոժը ջրի ճնըպարին կը կոտրվի։
36· Քոսոտ էծը աղբիւրի ակնան կիմի։
37· Մին քոսոտ դանա սաղ նախիրի անըմը կը կոտրի։
38· Աստուծ սարը կտեսնա, ձիւնը կտենի։
39· Էշին փալան, ձիին թամբ։
40· Վէննդը եորդանիդ դյորա մեկնի։
41· Շանը սպանողին քաշ տալ կտան։
42· Դէ՛ եկ, էշը ցիան հանի։
43· Հենդ վէգին մին սախկա ա պէտք։
44· Շոնը շանը վէննը կոխել չի։
45· Բեաքմազ ուտողի քթոլը դեռակըմը կենի։
46· Կթկթոցան պրծինք, ծլծլոցը ընկինք։
47· Խուփը գլորվից, կճոճը քթաւ։
48· Սլկըհից բիստի քթաւ։
49· Զոռաւ վերսի տարած շոնը, վէրս չի փոնիլ։
50· Սոդանին քաղցրը ինել չի։
51· Քինաց կատուն, տարաւ չաթուն։
52· Կյուլին գլխին ուխտարան կրթեցին, ասից· Շուտ ըրէք վէչխարը սարան անց կացաւ։
53· Առանց փչի վարդ չինիլ։
54· Ճաչան չկերինք, ծոխան քուռացինք։
55· Կաքաւի ձուն հաւի տակին չի մնալ։
56· Կաղնած եղնը կթրքի նստած եղան գլխին։

57· Արկաթը ինձանա, քյոմուրը քըզանա, չախկաչուխկիդ հի՞նչ տամ։
58· Մին ձեռքաւ ծափ տալ չի ինիլ։
59· Զալ օձ տեսնողը, չալ չաթուան էլ կվախի։
60· Տյուսը հյուրուֆարի, նեսկուսը փթած դյարի։
61· Փեչքէչ ըրած ձիու կոքընեերին եչել չըն։
62· Ձիրագը իւրան տակին լուս չի տալ։
63· Օղտերը կովեցին, գեոզոակը տահանի լաւ։
64· Ձիի թովլում էշ չըն կապել։
65· Ամեն կրթեցող մոլլա ֆանահ չի տեռնալ։
66· Գիժին մհար ամէն օր տոն ա։
67· Կատուին ըսեցին աղբդ դեղ (ճար) ա, տարաւ խոր թաղից։
68· Կոծկած կոժն էլ պէտք կը կեա։
69· Պղենձը ընկնելուց կոտրվել չի, ամմա ձէն կհանի։
70· Մրհակը եոր ունելուց կյող շոնը կփախչի։
71· Էժան մսան շորվա չի լինիլ։
72· Հանց տոն չըմ չինալ, վէր քանդվելուց վայ կանչիմ։
73· Տանձին լեաւը, արջը կոտի։
74· Խնձորը իւրան ծառան հեռի չի ընկնիլ։
75· Անողը պրծաւ, ասողը վէչ։
76· Քյոհլան էշին երա ճոխտ ճոխտ կը նստին։
77· Իրես տաս, աստառ կողի։
78· Քյոփագ շանը քուչի քուչի չըն անել։
79· Ագռաւը կցից կաքաւ երիշի քինալ, իւրանն էլ մուռացաւ։
80· Էն աղբիւրում թքել մէ, հչողան ջուրը խմըմ։
81· Օղտին ըսեցին խէ վեղզդ ծոռ ա, ասից· Հի՞նչրս ա դյուղ, վէր վեղզս դյուղ ենի։
82· Կատուին վազելը չըու մարաքը կենի։
83· Արջը ծմական խոռվից, ծմակը խակի խաբար չաք։
84· Թան չըս կերալ, թընթաթախ ման էլ չըս տեսա՞լ։
85· Քաչալը իւրան փըփախին հաւան կը կենա։
86· Վէչ մինն էլ իւրան թանին թթո չի ասել։
87· Էշը հի՞նչ գիդա մոշը հի՞նչ ա։
88· Առանց կրակի ծոխ չի ինիլ։
89· Զուտողի ապրանքը ուտողին հալալ ա։
90· Խոխան չրու լաց չինի, մարը ծեծ չի։
91· Կորան (կրիան) չընաղան տյուս եկաւ տալ։ իւրան չընաղին հաւան չը կացաւ։
92· Շանը հու ա տվալ եղուս պարկ։
93· Էշի քոռակը միշտ մօրը առաջը կընկնի։
94· Եղն ու մեղրը չան տկում։
95· Քացախի թյունդը իւրան ամանը կը ճքրցնի։
96· Սոված կովը կաթնը չի տալ։
97· Քոսուտ ձին, դաշեւի չխչխկոցան կփախչի։
98· Հոռի ծառին բար չի ինիլ։
99· Քաչալը ճար գիդա, իւրան գլխին կանի։
100· Հչտեղ ճպատ ըն կարըմ ծերը մեզ ա նի կեամ։
101· Էս ձեռքը էն ձեռքին մուհտաջ չինիլ։
102· Սերտըս մարդիս երան չի, պատրունիս անըմը գիդըմ չըմ։
103· Հչտեղ պերակ ա, ընդեղ կորվըմ ա։
104· Հինչ պէն օնիմ կարմունջըմը, վէր պատավիմ եափընջըմը։
105· Էծը էծին մհար լաւ ա, քան մին սիւրու վեխճարը։

ԱԻԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

40ԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ՅՈՒԲԼԵԱՆԻՆ ԱՌԹԻՒ

Հայ գրականութեան բազմավաստակ մշակը արդիւնաւոր գործունէութեան քառասուն տարիներ ունի իր եռեւ։ Անդադար տարիներ ուն իր գործունէութեանը, ուր բարդաւաճեց ան իր գործունէութիւնը, բազմապատուղ զարգացաւ։ Երկար թիւնը, բազմապատուղ զարգացաւ։ Երկար շարքեր անցորդներու ըմբոշխնեցին անոր Սնդաստանին բերքերէն։ Սերունդներ վայելեցին տոհմականները անոր քրտնալից երեսին։

Աւետիս Ահարոնեան գործեց գրական դպրեներու վրայ· իր եւ ուսուցչական ասպարէզներու վրայ· իր ճգտումներն եղան լոյսի բարերար ճառագայթներով կենսունակութիւն տալ հայ մտքին, կազդուրում հայ սրտին։ Ուսուցչական ամպիոնին վրայ նկատեց գինքը հայ երիտասարդութիւնը հիացմամբ եւ լսեց անոր կենդանի խօսքերը շահեկանութեամբ։ Գրական ասպարէզի վրայ հնչեցին անոր արտայայտութիւնները եւ գործեցին մոգիչ ազդեցութիւն ոգիներու վրայ· խլուեցան ձեռքէ ձեռք Մեծ Վարպետին ստեղծագործութիւնները ծարաւի հեռաբերբերութեամբ։ Ի տես անոր նկարներուն փղձկեցան սրտեր· սգացուցաւ սգակից· աղէտը՝ բողոք· ոգի ուրը գտաւ սգակից· աղէտը՝ բողոք· ոգի թեան տենչը։

Հայերէնախօս, հայրենաշունչ լեզուն նոր թարմութեամբ խօսեցաւ իր գրչին տակ· նոր ճանապարհ հորդեց խորհելու եւ արտայայտուելու։ Ընտիրը ընտրելագոյն տարրազով վերեւետեցաւ, պարզը պայծառ հանրազով վերեւետեցաւ, պարզը պայծառ հան-

© National Library of Armenia

դերձներով ելաւ հրապարակ, գեղեցիկը պարծեցաւ իւր գեղովը· եւ բարեվայելուչ հրապոյրը ոճի եւ ձեւի դիւթեց մտքեր, նրբացուց քիմքեր, սրեց ճաշակներ:

Հրապարակախօսը լսուեցաւ յակճիռս· ծափահարուեցաւ խանդավառութեամբ· մատենագիրը գնահատուեցաւ իւր կենդանութեան:

Աստուածատուր ձիրքն էր որ զարդ եւ կերպարանք կու տար անոր մտքի յղացումներուն· Ահարոնեան արբեցած էր դիւցական նեկտարով: Բայց եւ ջանքը բերած էր իր բաժինը, բնատուրը ապնուացնելու ազնուագոյն կաղապարի վրայ· արուեստագործին ձեռքը տաչած յղկած էր բնականին անհարթութիւնները:

Ահարոնեանի երկերու մէջ դուրս կը կարկաւին գեղարուեստասէրը, հոգեխօսը, լեզուագէտը: Անոնք հաշտ են իրարու հետ, գրկախառնուած սիրով· միութիւնը համերաշխութեան մէջ պերճացած:

Արեւելեան եւ Արեւմտեան բարբառները առաջին անգամ Ահարոնեանի գրչին տակ կը համբուրեն զիրար· փորձը այս զինակցութիւնը կնքելու եւ անոր արդիւնաւէտ յաջողութիւնը կը բերեն պատիւ համոզկերին: Զինակցութիւնը երկու բարբառներու Մեծ Վարպետին հրամանատարութեան տակ ուժեղացուցած է լեզուն, ճոխացուցած բառամթերքը, ճկունութիւն պարգեւած շարժումներուն: Զօրավիգն կոչուած նաեւ գրաբարի հարուստ գանձը, ստացած է հայերէնը սատկութիւն եւ ճոխութիւն:

Լեզուն միջոցն է մտքի զգացումներու արտայայտութեան· եւ Ահարոնեան ցոյց կու տայ սուր միտք եւ նուրբ զգացում· ա՛յս օժանդակներով կը թափանցէ նա իրերուն խորքը, կը տարբերուծէ երեւոյթները, կ՚ըլլայ միջամուխ ներքին աշխարհներ, հոգեխօսական շարժագծերու յայտնութեան ի խնդիր: Պատկերը, որ արդիւնքն է իր այս հեռատօսական արշաւանքներուն, կը տարածուի մեր առաջ կենդանի, խօսուն եւ համեմատ բնութեան:

Վրձինի շարժումները կը զգացուին հոն իրենց նրբութեան մէջ· արուեստն է ստեղծագործը· արտայայտութիւնները կը պատմեն ճաշակագէտ նկարչին ընդունակութիւնները:

Զգայուն է նկարիչը· բայց տեսարանը՝ որուն հանդիսատեսն է եւ նկարահանը, բազմագէտ է: 90ական թուականին յաջորդող ժամանակներն ունի նա իւր զննութեան առարկայ· հայ պատմութեան այս արիւնոտ էջերը: Զէր կարող արիւնը՝ զգայուն սրտի շրթունքներու վրայ ժպիտ արթնցնել· արցունքի ծովին մէջ արցունք կաթեցուց· իւր ստեղծագործութիւններու մէջ թախիծն ընդարձակ տեղ գրաւեց, ողբագին հնչեցին իւր քնարի լարերը: Լացի աղաղակները բոզոք էին բնութեան դէմ· հեծկլտանքները պիտի շարժէին քար սրտերը: Աղէտը կը պահանջէր կարեկցութիւն: Բայց արտասուքի տարափին տակ չընկճեցաւ բանաստեղծը: Ներշնչեց քաջալերութիւն· ազատութեան հեռապատկերով խրախոյս կարդաց թշուառականին· ընկճուածը փորձեց բարձրանալ:

Նա բերաւ իր բաժինը:

Շատ բան տեսաւ, շատ բան ապրեցաւ· իւր տպաւորութիւններու թարգմաններն են իւր գրչին երկերը: Օտար աշխարհներ այդ էջերու մէջ փոխադրուեցան հայրենիք· օտար ժողովուրդներու բարքերը ցուցադրուեցան հայրենիքի բեմին վրայ, օտարին առաւելութեամբը զրգիռ առթելու իւրայիններուն դէպի զարգացում· եւ նուազութիւններովը ամրապնդելու զանոնք հայրենի առաքինութիւններու մէջ: Հոգեխօսական պատկերները զարձան զննութեան առարկայ մեծին եւ փոքրին, գործեցին անոնք յեղափոխութիւն սրտերու մէջ:

Ազնուագոյն դէմքը նորագոյն գրականութեան կ՚ողջունենք մենք յանձին Ա· Ահարոնեանի: Թանկագին գանձեր են անոր ստեղծագործութիւնները հայրենի թանգարանին մէջ· անոնք պիտի պահեն իրենց արժէքը հայ գրականութեան համար ընդերկար:

Հ. Ն. Ա.

ՄՕՐԻԿ ԿԱՅՍԵՐ ՀՕՐ ԽՐԱՏԸ

Enno Littmann, Tigriña-Texte im Dialekte von Tanbên, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, XVI (1902), 211—225 կը հրատարակէ քանի մը մանր բնագիրներ եթովպական Տիգրինա կոչուած բարբառով, զորոնք գրի առած է իր խնդրանօք Վալդա Տենսաէ Տանբէնցի

հապէշ կրօնաւորն Երուսաղէմի մէջ 1900ին: Ուշադրաւ է այս բնագիրներէն առաջինը, որ հետեւեալն է (էջ 213):

«Մարդ մը կար, որուն հայրը վախճանած էր: Իւր հօր ընտանիքն [եւ] իւր սեպհական ընտանիքը իրեն հոգ պատճառեցին, որովհետեւ անոնք իրարու հետ կը կռուէին: Կար փիլիսոփայ մը, վարպետ մը: Փիլիսոփային մարդիկ գրկեց ըսելու անոր· Իմ ընտանիքս [եւ] իմ հօր ընտանիքը ինձի հոգ կը պատճառեն, որովհետեւ անոնք իրարու հետ կը կռուին: Խորհուրդ մը տուր ինձ: [Մարդիկ] գացին եւ ըսին անոր: Անիկա նստած էր աթոռի մը վրայ· ցատկեց, վազեց դուրս· անոնք կը նայէին անոր թէ ի՞նչ պէս հինաւուրց տունկ մը կը կարէր եւ մատղաշ տունկ մը հողով կը պատէր· որ եւ է պատասխան չտուաւ: Անոնք գացին եւ ելան [զիրենք ուղարկողին] առջեւ:

«Ի՞նչ ըսաւ ձեզի անիկա», հարցուց անոնց: «Մեզի պատասխան չտուաւ» ըսին անոնց: «Բայց երբ դուք անոր ըսիք, ի՞նչ ըրաւ անիկա»: Անոնք ըսին եւ պատմեցին անոր· «Անիկա աթոռի մը վրայ նստած էր· դուրս ելաւ· հինաւուրց տունկը արմատաքի հանեց եւ նետեց մէկդի, մատաղ բոյսը հողով պատեց»: «Զհասկցա՞ք ուրեմն դուք Այնու որ, անիկա հինաւուրց տունկը դուրս խլեց եւ նետեց մէկդի, ըսել ուզեց· Հօրդ ընտանիքը հեռացուր քեզմէ· եւ երբ մատաղատունկը հողով պատեց, ըսել ուզեց· Առքու սեպհական ընտանիքը եւ ապրէ: Ինչ խորհուրդ որ ուզեց տալ ինձի մարդը, բարեհնչան է»:

Այս անպաճոյճ պատմուածքը զարմանալի նմանութիւն ունի այն խրատին հետ, զոր տուած է Մօրիկի հայրը նորընտիր Կայսեր, համաձայն Կիրակոս Գանձակեցւոյ, որ այսպէս կը գրէ (էջ 28).

«Ասեն զամանէ (զՄօրիկ Կայսերէ), թէ առաքեաց առ հայրն իւր թողուլ զպանդխութիւնն եւ գալ վայելել զփառս նորա. եւ թէ ոչ՝ խրատ առաքել նմա, որով կարասցէ վարել զթագաւորութիւն: Եւ երթեալ սպասաւորացն զտին զնա զի զարմանէր զպարտէզն. եւ ասացին նմա զհրաման թագաւորին: Նա պատասխանի ետ եւ ասէ. թագաւորի հայր ես ոչ վայելեմ: Եւ ինքն սկսաւ զմեծամեծ կաղամբան՝ որ ի պարտիզի անդ՝ արմատախիլ առնել, կտրել զգլուխս եւ ծածկել ընդ հողով, եւ զմանուսն փայել եւ յօրինել: Եւ արանցն տեսեալ զայն՝ համարեցան զնա բախած. թողեալ զնա՝ զայն բաց զնացին. իսկ զոր ինչ արար նա՝ զայն ոչ զիտացին: Եւ զնացեալ առ թագաւորն՝ պատմեցին զամենայն, եւ զյիմարութիւն զոր զործեաց ի պարտիզին: Իսկ Մօրիկ իբրեւ լուաւ՝ ծիծաղեցաւ, եւ ոչինչ յայտնեաց. եւ կալեալ զմեծամեծս՝ զոր կարծէր թէ սատան են թագաւորութեան իւրոյ, երարձ զամենեսեան, զի մի ցաւ ինչ լինիցի· եւ զփոքունսն ի տեղիս նոցա կարգեաց· եւ կոչեցեալ զարան զայնոսիկ զոր առաքեաց առ հայրն՝ ասէ ցնոսա· Այս էր խրատ հօրս հայրն՝ ասէ ցնոսա· Այս էր խրատ հօրս իմոյ, զոր արար ի պարտիզին· եւ դուք ոչ իմանայիք»:

Խրատիս խորհուրդը մի եւ նոյն է· մերձեցումը Կիրակոսի քով աւելի բնական եւ նպատակայարմար: Այս գործելու կերպն է եղած բոնաւորներու, ամէն տեղ եւ ամէն ժամանակ: Գործնականէն վերցուած այս խորհրդապատկերը կ՚երեւայ թէ ստեղծագործութիւնն է արեւելեան մտածող մտքի, որ այսպէս երեւան կու գայ կրկին խմբագրութեամբ: Կիրակոսի «ասեն»ը ցոյց կու տայ, թէ ինքն ալ լսած է ժողովրդեան բերանը, մերձեցուած Մօրիկ Կայսեր գործելու կերպին:

Միւս բնագիրներէն չորրորդը (էջ 217—218)՝ խիճով եւ ոսկւով լեցուն արկղներու առակը ունի իր նմանութիւնը Յովասաֆայ եւ Բարլաամի պատմութեան մէջ (Առակ Զ.): Երկրորդը՝ Ա. = Zotenberg, Առակ Զ.): Երկրորդը՝ Զորք իրք են (էջ 212—217), ինչպէս Littmann նկատած է (էջ 219) յօրինուած է նմանութեամբ maṣḥafa falâsfa ṭabîbân-ի (հրտ. Cornill, Leipzig 1875), որ կը գտնուի նաեւ հայերէն թարգմանութեամբ ի չարս խրատական գրականութեան:

Հ. Ն. ԱԿԻՆՆԱՆ

ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՒՆՈՒՆՑ, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց վանքի Կոթեանց, 1929, 8°, էջք ԺԶ+544: Գինն՝ 2 շիլին:

Երուսաղէմի Ս· Յակոբեանց վանքի միաբաններու եւ հայ այցելուներու անուանացանկը կը ներկայացնէ հոս Մկրտիչ Սրբազանը, իւրաքանչիւր անուան կից տալով նաեւ համառօտ կենսագրական գիծեր: Դ· դարէն մինչեւ մեր օրը Երուսաղէմ այցելողները դառած են հոն փոքրիկ անկիւն մը:

Բայց Երուսաղէմ քաղաք մըն է, ուր ամէն դարու մէջ մտած են անթիւ ուխտաւորներ, անհամար մահտեսիներ եւ հաջիներ եղած են անկէ եւ ցրուած աշխարհի ամէն կողմերը: Ընդարձակ հատորներ պիտի տար, եթէ հնարաւոր ըլլար մի առ մի թուել այդ այցելուներու անունները, բռնել անոնց վիճակագրութիւնը: Մկրտիչ Սրբազան բազմախոյզ պրպտումներով աշխատութիւնն յանձն առած է ամփոփել հատորիս